



ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 94-Ա
ք. Երևան

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի ԹԻՎ 129-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի, 43-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության՝ անվան փոփոխության մասին դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի ««ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հեղինակագործման մասին» թիվ 129-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» անվանումը փոխարինել «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» անվամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք. Երևան